ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԻՐԱՀԱՒ

Ամառ ձմեռ ոչ դիտեմ, մի եղանակ է ընդա
Երբ հընչէ հաւն ի հաւուց՝ ամենաձայն Սիրահաւ ։
Փշրին շղթայք սառնաշարք, փըլչին պարիսպք հիւսիսի,
Երկինք ու երկիր ծաղկալոյս փարին երես երեսի.
Կարմրիկ կակղիկ ճառագայթք հորիզոնէ հորիզոն
Փայլկըտալով գան բերեն ըղձանկալի գարնան տօն.
Ճըխայ, ճըլւուլ տայ ճըռնողն անապատի ծիծեռնուկ.
Շարժի աշխարհ ու ցընծայ. ընծային վարդ ու գառնուկ.
Երամ երամ գոյնըզգոյն ծաղկունք դաշտի, հաւք օդուն՝
Սփռեն անոյշ հոտ, անոյշ համ, անոյշ կեանք ամենուն.
Սիպտակ տաքուկ աղաւնեկն հրաւէր բանայ հարսանեաց. —
Ա՜յ իմ տատրակ, դեռ ողբա՞ս դու ի հողմայրք սիրելեաց ։ —
Ամառ ձմեռ ոչ դիտեմ, մի եղանակ է ընդա
Երբ հընչէ հաւն ի հաւուց՝ ամենաձայն Սիրահաւ ։

Այլ ո՞ւր դու Հաւ ցանկալի, զոր՝ ծերք փիւնիկ կոչեցին,
Եւ հինգ հարիւր տարին մէկ մ'աւեն, — վա՜յ տեսնողին, —
Ասեն, Ադամ-որդոցս ինքն անմահութեան տայ վայելս,
Երբ յարեւէն կեանք առնու, կեանք տայ աչկունքն յարեւելս ։
Ա՜հ, ի՜նչ կամկար բուսնի, ի՜նչ շուտ թափթըփի այն փետուր՝
Որոյ տեսուն քըսան ցեղ մարդկան սպասէ շունչկըտուր ։
Կարօտ եմք քեզ, մե՛ծ կարօտ, ո՛վ Սիրահաւդ իմ փիւնիկ,
Վախեմ աշխարհ կորուսեր է զանըման քո բունիկ.
Հա՜պա, ձենէ մեզ, ձենէ՛, ո՜ւր պահուըտիս, ո՜ւր մընչես.
Չըկայ մեզ լոյս, չըկայ կեանք, չըկայ ընչիկ՝ թէ դու չես.
Աշխարհս ամէն աճըզի, արեւն հագնի մութ հալաւ՝
Թէ դու ծածկիս, թէ դու լռես՝ չաքարըերան Սիրահաւ ։
Վա՜յ թէ տաքուկ թեւերովդ թռչիս մենէ հեռանաս.
Նստէ 'ի ծայր ցըրտանան մեր սահմանք. սառն անպակաս ։ —

digitised by A.R.A.R.@

Արեւք աստեղք յուսահատ լուսահատ կան հեռըւանց.
Ոչ մի կայծակ ոչ մի ճար չազդէ 'ի սիրտ չարնախանձ.
Օձեր բունին ի հովիտ հարազատաց գըրկերու,
Եւ կուսանաց կոյս աչեր ծնանին կարիճ մահացու...
Ա՛յ Սիրահար Սիրահար, ո՞ւր է քո ձայն աւետեաց.
Անուշխօսիկ ո՞ւր շըրթունք բացօղք գըրանց պըղընձեաց.
Դառն է ամեն դեղ՝ թէ ոչ շաղուէ սիրոյն շաքարիկ.
Ամեն մըլհամ խանգրէ զխոց՝ թէ չըխառնի եղ կակղիկ:
Սուրբ են հաւատք, իրաւունք՝ պաշտելիք, քաղցր՝ հայրենիք,
Այլ թէ սիրով չըղուգին՝ ահա եղան վայրենիք:
Թէ եւ յերկնից գայ մըրրիկ՝ սակայն ջարդէ աջ ու ձախ.
Սէր լուկ կոխէ, անցնի, ւոչ կոտրէ զեղեգըն ջախջախ:
Ինձ երգեհոն պիտի այս աշխարհ. փողեր զանազան,
Այլ հաւասար դաշնակիցք և համաձայնք 'ի հնչման.
Ինձ չորս պիտի ձայն. Կրօնից և Գիտութեանց ու Ընտանեաց,
Եւ իմաստուն իմաստիւ ձայն հին և Նոր Հայրենեաց.
Եղեմական ինձ պիտին գետեր, բղխեն չորեքդէմ,
Ձեւեն ջըրեն աշխարհներ, երթան ի ծով զուգաճեմ:
Ինձ դու պիտիս, դու պիտիս ամենուն, Սէր, քանց արեւ,
Խաղաղապետ դու երկրի, լարիչ սըրտից, հոգւոց թեւ...
Արի Սէր, եկ. Թէ քիչ մ'այլ յամես՝ սրտերս ողջ սառին,
Անշունչ անշարժ սարերուդ Նըման դէմ դէմ կարկառին:
Արի, դարձիր Սէր, հեռու ճամբէդ, 'ի խոր ծածկոցէդ.
Դարձիր դարձիր Սիրահար, եթէ հոգիքս են քեզ պէտ...
Ա՛հ. միգապատ հիւսիսոյ սառնալերինք իսկ կակղին,
Հալած ժայռեր հասցընեն մինչ ի հարաւ տօթագին:
Արարատայ արտասունքով Երասխ ուռի հառաչէ,
Ծով ծըծէ զգետն՝ յամպ թըռչի, աստղըն յամպէն չամաչէ...
Դարձիր դարձիր հոգեթեւ սիրոյ հրեշտակ շնորհազարդ.
Քո դառնալուն՝ անապատքս այլ դառնան 'ի Նորվարդ:
Գիտեմ դարչիս 'ի չփոթից և ոչ խոտրես աստիճան.
Թագք, գաւազանք և պըսակք՝ նոյն քեզ և խաչք պատուական.
Գիտեմ թողուս դու զբարձրեր, ընտրես ցածուն քեզ դադար,
Թէ և լըռիկ անծանօթ անշէն՝ անշուք տաղաւար,
Ուր որ գըտուի հեզութեամբ խորացեալ սիրտ վըշտամբեր,
Ուր կայծք երկու վառին, Սէրն առ Աստուած սէրն առ ընկեր: —
Խոնարհեցէք ով բարձունք, մօտեցէք ով ընդդիմակք,
Քնքոյշ չփմամբ՝ ոչ փշըրմամբ ծագին սրտից փայլատակք...
Անխոց խղճիւ և գիտմամբ, եղբայր, կազմէ զքո հոգին,
Զինչ ցեղ կակուղ կըտորօք հաւիկն ըզգոդ իւր բընկին: —
Հա՛պա, հաւսար հրաւիրենք. Հրամէ՛ փինիկ Սիրահար.
Ձանձրացանք ցուրտ հովերէս. կարօտ սրտիս ճարն հատաւ.

digitised by A.R.A.R.@

Շատաշաղփաղփ շատքարող հըպարտ հաւեր չըպիտին.
Մէն քո մըմռնջք է դարուն և դեղ հիւանդ մեր սըրտին։
Ահա մեր սիրտք. եկ, մըտիր հանգչէր թեւօքըդ փափուկ.
Ձըգէ ձէնիկ մի անոյշ. սառերն հալին, լըռեն բուքք.
Փայլատակէ կրակ աչեր, թօթվէ թեւերդ հրափետուր,
Եւ լոյս և տաք, իրաւունք և սէր սփռին ընդհանուր։
Ամառ ձըմեռ ոչ գիտեմ, մի եղանակ է բնաւ
Երբ հնչէ հաւն ի հաւուց՝ ամենաձայն Սիրահաւ։

Հ. Պ. Թ.

Ի ԾՆՈՒՆԴ

ԵՒ

ՅԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

ԳԵՂՕՆՔ ՄԱՆԿԱԿԱՆ

Մանուկ մի ի պարուէն

Ի սուրբն որորան,
Զոր բիւր զուարթունք շուրջ պատեն,
Ուր մեզ ծնանի մանուկն ի գեղ հրաշազան,
Եկայք ի սէր գովաբանել ազգ ամեն.
Եկայք հօտի նորածին լոյս սիրական,
Ի սուրբն որորան։

Աստուած հըզօր տէր,
Որ մերս առ սէր եկիր ի ծնունդ,
Որ առ ի սէր տըղայանալ յանձն առեր,
Այսօրածին մանուկ, եւ զքեզ, սիրտ ի թունդ
Պաշտել, փըրկիչ, որ ծնար յերկիր վասըն մեր,
Աստուած հըզօր տէր։

Հայեցարուք, ճն,
Ահա ժըմնոր մեղմագին,
Եւ ըզմեր սիրտս անձկայ լիով իւր ի ձօն.
Գիրկս արկանէ, ձըգէ առ ինք սիրային,
Զինչ տեսարան քան զայս քաղցրիկ և ըմբոն,
Հայեցարուք, ճն։

digitised by A.R.A.R.@